

Գ Լ Խ Ա Վ Ո Ր Տ Ն Օ Ր Ե Ն Ի Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հունիսի 2021 թվականի N ՏՊ-008-06/21

ք. Երևան

**«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» Բաց բաժնետիրական ընկերության
կողմից թողարկած անվանական արժեկտրոնային պարտատոմսերը
տեղաբաշխման թույլատրելու մասին**

Հիմք ընդունելով «ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Տեղաբաշխող) 2021 թվականի հունիսի 08-ի դիմումը «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Թողարկող) 10,000 դրամ անվանական արժեքով, 120 ամիս շրջանառության ժամկետով, 12% տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքով, 1,500,000 հատ պարտատոմսերի տեղաբաշխումը թույլատրելու վերաբերյալ, ինչպես նաև «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Օպերատոր) Ցուցակման բաժնի ղեկավարի կողմից 2021 թվականի հունիսի 08-ին ներկայացված եզրակացությունը:

Ղեկավարվելով Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոնների» 17-րդ գլխի 98) կետով և Բորսայի կանոնադրությամբ 9-րդ գլխի 9.59) կետի գ) ենթակետով, Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» Բաց բաժնետիրական ընկերության 10,000 դրամ անվանական արժեքով, 120 ամիս շրջանառության ժամկետով, 12% տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքով, 1,500,000 հատ անվանական արժեկտրոնային պարտատոմսերը, որոնց «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից շնորհվել է AMASGRB21ER9 ծածկագիրը, թույլատրել տեղաբաշխման Օպերատորի տեղաբաշխման հարթակում՝ շնորհելով ASGRB1 հապավումը:
2. Տեղաբաշխումը կազմակերպել ս.թ. հունիսի 11-ին փակ ստանդարտ աճուրդի եղանակով՝ բացառելով գնման ոչ մրցակցային և լրիվ բավարարմամբ պայմաններով գնման հայտերի ներկայացումը տեղաբաշխման համակարգում:
3. Սույն որոշման ընդունման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակն ուղարկել Թողարկողին:
4. Սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշման մասին տեղեկությունները հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով համապատասխան ստորաբաժանումների կողմից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

ՀԱՅԿ ԵԳԱՆՅԱՆ